ՀԱՆԳԻՍՏ Տ. ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Սույն թվականի նոյեմբերի 19-ին ի Տեր հանգչաւ Կոտայքի թեմի Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու ծիսակատար Տ. Եղիշե քահանա Աբրահամյանը, ով ավելի քան 37 տարի ծառայել է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցում:

Համեստ էր, խոնարհ, նվիրված, ժողովրդասեր: Անմնացորդ սիրում էր եկեղեցին և ըստ կարի յուրում ծառայեց ժողովրդին:

Տեր Եղիշեն ծնվել է 1923 թ. Հրազդանի շրջանի Բջնի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 1966-68 թթ. մասնակցել է Ս. Էջմիածնում կազմակերպված քահանայից պատրաստման դասընթացներին: 1966 թ. օգոստոսի 2-ին, ձեռամբ Տ. Վահան արքեպս. Տերյանի, ձեռնադրվել է քահանա: 1976 թ. լանջախաչ կրելու իրավունք է ստացել:

Հանգուցյալ Տեր Հոր հոգևոր ծառայությունը գնահատվել է և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

Հանգուցյալ քահանայի աճյունը դրվեց Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցում, ուր նոյեմբերի 22-ին մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանի, կատարվեց վերջին օծման կարգը:

Դամբանականում Սրբազան Հայրը մասնավորապես նշեց. «Հանձնարարությամբ ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի եկել ենք փոխանցելու Բջնիի ողջ համայնքին Վեհափառ Հայրապետի վշտակցությունը, քանզի Տ. Եղիշե քահանան իր կյանքն անմնացորդ նվիրեց Աստծուն, Եկեղեցուն և ժողովրդին, որի համար նա սիրված էր բոլորի կողմից...: Հետևաբար երախտագիտությամբ, հարգանքով ու աղոթքով ենք նրան ճանապարհում դեպի Երկնքի Արքայություն»:

Հանգուցյալ Տ. Եղիշե քահանայի աճյունն ամփոփվեց Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու բակում:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ